

Թագաւորական հրամանագիր մը՝ զիէնդ ուսուցիչ արաբական լեզուի, տը Սասիի յաջորդ կ'անուանէր, ու ամիս մ'ալ ետքը՝ զժողովրդ յանձանձիչ մատակարարութեան դպրոցին. ու մայիսի 22 ին տրուած նոր հրամանագրով մ'ալ արևելեան կենդանի լեզուաց դպրոցը կ'ըկին կը բարեկարգուէր. Սեր նիւթին հետ վերաբերութիւն չունենալով ուրիշ լեզուաց ուսման համար եղած այլ և այլ կարգադրութիւններ ու փոփոխութիւններն, յիշեմ որ երբ 1862 յունուար 20 ին վախճանեցաւ լեզուի ուսուցիչ Լըվայեան տը Ֆլորիվալ, ուսուցչաց ժողովն առաջարկեց Տիւրրիէի՝ որ մալայեցի և յաւանական լեզուաց վարժապետ էր ի դպրոցին, և հայկական լեզուի ու մատենագրութեան հետամուտ և տեղեակ, որ մէկալ լեզուաց դասախօսութիւնը ձգելով, յանձնառու ըլլայ հայկական լեզուի դասերը աւանդել. որով կայսերական վճռով հայերէնի ուսուցիչ անուանեցաւ ի 19 փետրուարի:

Այն պաշտօնին մէջ շարունակեց գովութեամբ Տիւրրիէ մինչև իր մահը՝ որ հանդիպեցաւ ի 1881 ի 20 գեկտեմբերի, և իր յաջորդը մէկէն չի նշանակուեցաւ. այլ դպրոցին քարտուղարը Գարրիէր առ ժամանակեայ կերպով կ'աւանդէր հայկական լեզուն:

Այսպէս արևելեան կենդանի լեզուաց դպրոցին սկզբնաւորութենէն հայկական լեզուի ուսուցիչք եղած են՝

Զրպետ Շահան առ ժամանակեայ	1798 — 1801.
» » »	1810 — 1812.
» » ուսուցիչ.	1812 — 1830
Լըվայեան տը Ֆլորիվալ տեղապահ.	1826 — 1830.
» » » ուսուցիչ.	1830 — 1862
Տիւրրիէ	1862 — 1881.
Գարրիէր (յանձնարարութեամբ)	1881

ՇԱՀԵԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՂԵՑԻԿ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

(880 յ'էջ 321)



տար գէնքէ մղուած՝ խոյս կու տայ Յունաստանէն արուեստից խաղաղասէր հանճարն, և կ'ապաստանի յեգիպտոս՝ գոռոզ Պրտըմեանց քով, ուր Թէոկրիտոս և Կալլիմաքոս ՚ի պաշտպանութիւն իրենց կենաց՝ ընտիր ճաշակաց կը դիմեն և Գեղեցիկ — Դպրութեանց ետեւ կ'ըլլան. Հօն ալ զարմանալի կերպով կը ծաղկին Գեղարուեստը՝ մի քան զմի գերազանց, իւ սակայն շատ չանցաւ՝ հօն տեղի պալատականաց հմտութենէն և դիւանապետաց գլխաւորեն.

րէն հրապուրուած՝ թողին բանաստեղծը բնութեան նկարագիրն ու գիտութեանց խաբէական դրութեանց ետեւէ եղան։ Նորաձեւութեան համար մերժեցին ճշմարտութիւն և հետզհետէ կործանեցան ստույթեանց մէջ, նախ ինչպով յոճ ցամաքութեան, ցամաքութենէն ի տղայական, տղայականէն յանսովոր, և յանսովորէն հուսկ ուրեմն ծաղրելի այլանդակութեան մէջ։

Եզրպտոս հանդիպածէն տարբեր չեղաւ նաև Հռովմայ մէջ։ Ունեցան այժ Հռովմայեցիք ալ Մարկեղոս մը, փուլիիոս փակկոս մը, Լուկիոս Սկիպիոն և Գայիոս մը, և ի Յունաց գերեալ ամենէն հրաշալի արձաններն՝ իրենց հրապարակները բռնած էին. բայց ինչ օգուտ ասկէ։ Ոչ ինչ, քանի որ կիկերոն և Որատիոս, Վիրգիլիոս և Ովիդիոս չէին ցուցած իրենց ընտիր ճաշակօք յունական օրինակաց յարգն ու զերազանցութիւնը. եթէ ասոնք իրենց օրինական և աւանդութեամբ չսորվեցնէին մեզի՝ թէ ինչպէս մեծամեծ հանճարներ նախադադափարաց պէտք է հետևին. եթէ Մեկենաս մոուցած լըլլար Սեփոստոսի արքունեաց մէջ Գեղեցիկ—Դպրութեանց այն ընտիր և վաճառական տեսակը, յորում անուանի մարդիկ իրարու հետ կը խօսակցին, և որ այնչափ պատիւ ստացաւ. այս ամէն բանէս առաջ, կ'ըսեմ՝ չկրցաւ Հռովմ իր մէկ արդեանցը վրայ պարծիլ՝ որ կարենայ բաղդատուիլ Յունաց անհամար ունեցածներուն հետ, նկատմամբ ճարտարապետութեան և արձանագործութեան։ Բայց հազիւ թէ Տիրերիոս, Կալիգուլա և Կլաւդիոս կայսերաց ատեն՝ Գեղեցիկ—Դպրութիւնք ինչալ կը սկսին՝ պերճախօսութեանց ապականելուն համար, և կը լռեն կիկերոնի և Որատիոսի ժամանակաց զուարթարար և համբոյր պերճախօսութիւնք, և անհամար փիլիսոփայից դասուն մեծահանդէս հակաճառութիւնք, և ահա ճարտապետութիւն և արձանագործութիւն՝ ապականեալ ճարտարախօսութեան կը հակառակին. և մինչդեռ այս վերջինս ամբարտաւանութեամբ կը փքանայ և կը ճոխանայ, անոնք ընդ հակառակն՝ անձանձրոյթ գործունէութեամբ անչափելի սեանց դադարեցնելու վրայ կը բարձրանան ըսկա յանման։ Իսկ անկէց ալ աւելի վերջ՝ կայսերութեան հետզհետէ տըկարանալուն միջոց՝ զուր տեղ զանազան անձինք, որք հասարակապետութեան և գեղարուեստից նկատմամբ մեծ արդիւնք ունեցան, և որք ընտիր ճաշակաց ընդհանուր ալեկոծութենէն հազիւ ազատած՝ կարծես թէ գեռ լողալու հետ էին, զուր տեղ փորձեցին ասոնք նորէն ծաղկեցնել զայն իտայիոյ մէջ։ Բանի չեկան ամենեկին ամենայն ճիգն զանազան կայսերաց, անհամար ծախքեր և երկայն ճանապարհորդութիւններ, և ոչ իսկ մեծամեծ շէնքեր, զլիաւորապէս Ոգրիանոսի կանգնածներն. վասն զի ընտիր ճաշակաց աղաւաղումն ընդհանուր ըլլալով, և պերճախօսութիւնը՝ խեղկատակութեամբ և իմաստափութեամբ լցուած, և Յունաստանի և Հռովմայ այն գեղե-

ցիկ ժամանակաց մեծամեծ գրիչք միապաշտեան մէջ ձգուած, խիստ գոհարին կու գար պատանեկութեան հասակէն՝ վարձկան վարպետներու դպրոցաց մէջ ծծել իբրեւ զուտ աղբերէ՝ ճամբարութեան և մեծութեան ճաշակը, զոր յետոյ իրեն իբրեւ առաջնորդ պիտի առնոյր՝ ամէն արուեստի գործադրութեանց մէջ, —

Երկայն կ'ըլլար եթէ Գեղեցիկ — Դպրութեանց յարգն ու օգտակարութիւնքն՝ ամէն ազգի մէջ զատ զատ՝ ուզենայինք ցուցնել։ Ասով առաջ կ'երթան նաեւ այսօրուան օրս քաղաքակրթութիւնք և արուեստք, որով ազգ մը և տէրութիւն կը պարծի և կը ճոխանայ այլոց վրայ. ասով է՝ որ իտալացին, Գերմանացին, Անգղիացին և Գաղղիացին՝ ամէն տէրութիւններէ ընտիր և ծաղկած կը համարուին. և դեռ ինչ. ասոր արդիւնքն է դարձեալ՝ երբ առաքելայան քարոզիչք այսօրուան օրս՝ ձայն բարձրացնելով ամալիոններու վրայէն՝ հոգեւոր ճամբու մէջ մոլորեալները կ'ուղղեն, և արքայութեան որդի կ'ընեն....

Ինչպէս փորձով դիտենք, փիլիսոփայական և տրամաբանական խնդիրներն՝ աւելի բարձր սահմանի մէջ կը թռչին, և այնպիսի առարկայից վրայ կը ճառեն՝ որ շատ աւելի մտաց կորովութիւն կը պահանջեն. այսինքն է՝ մարդուս մտաց ըրած յառաջագիմութիւնն՝ ճշմարտութիւնը խնդրելու ատեն, և կամքերնիս ուղղելու կերպին վերայ՝ բարոյն հետեւութեամբ, կը սորվեցնեն մարդուս թէ ինչ կերպով կրնայ իր բնութիւնը կատարելագործել՝ իբրեւ բանաւոր էակ. և իբրեւ ենթակայ բարոյական պարտուց՝ ինչ բաներու պարտական է. ուր Գեղեցիկ — Դպրութիւնք կը նկատեն զմարդ իբրեւ էակ մը երեւակայութեամբ և ընտիր ճաշակօք ճոխացեալ՝ որ երթալով կը գեղեցկացնէ՝ միտքը՝ խելացի և օգտամատոյց զբօսանօք, կը բանան դիմացնիս հետազօտութեանց լայն և ընդարձակ ասպարէզ մի՛ բոլորովին իրենց յատուկ և մասնական, Այն ամէն բան՝ որ կը վերաբերի գեղեցկութեան, դաշնաւորութեան, մեծութեան և բարակութեան, այն ամէն բան որ կրնայ յաղեցնել միտքը, հաճելի ըլլալ երեւակայութեան և շարժել զսիրտ, իրենց սահմանին մ'ալ ունին՝ որ մեր միտքը կ'աշխատցնեն՝ առանց յոգնեցնելու, կ'առաջնորդեն կը տանին բարակ քննութեանց՝ բայց ոչ նեղացուցիչ ոճով, խորին՝ բայց ոչ ցամաք և գոհարիմաց. ծաղիկներ կը սփռեն գիտութեան ճամբուն վրայ. և մինչ կերպով մը յօժարութեան և գործունէութեան մէջ կը բռնեն միտքը, կը թեթեւցնեն նաեւ ի նմին ժամոռակի այն տաղտկալից աշխատութենէն՝ որուն մէջ ինկած է՝ կարեւոր հմտութիւն ստանալու համար, կամ վերացեալ ճամբարութիւններ հետազօտելու։

Այս ուսմունք յատուկ օգտակարութիւն մ'ալ ունին՝ որ մեր միտքը կ'աշխատցնեն՝ առանց յոգնեցնելու, կ'առաջնորդեն կը տանին բարակ քննութեանց՝ բայց ոչ նեղացուցիչ ոճով, խորին՝ բայց ոչ ցամաք և գոհարիմաց. ծաղիկներ կը սփռեն գիտութեան ճամբուն վրայ. և մինչ կերպով մը յօժարութեան և գործունէութեան մէջ կը բռնեն միտքը, կը թեթեւցնեն նաեւ ի նմին ժամոռակի այն տաղտկալից աշխատութենէն՝ որուն մէջ ինկած է՝ կարեւոր հմտութիւն ստանալու համար, կամ վերացեալ ճամբարութիւններ հետազօտելու։

Կարծես թէ նախախնամութեան մասնաւոր տեսչութեամբ դը-

բուած է այս ախորժը մեր սրտին մէջ՝ ընդ մէջ զգայականին և մտաւորականին։ Առջինին ցած հաճոյից ետեւէն երթալու շնորհը որոշուած, տալականայ չկայ։ Բայց՝ և ոչ ալ կարողութիւննիս կը տանի՝ թափառիլ շարունակ բարձրագոյն գաւառի մը մէջ, ինչպէս է երկրորդն։ Մըտաւորական երկայն բարակ աշխատութենէ վերջը՝ ընտիր ախորժակըն ու անոր ճաշակն կը զօրացընէ միտքը։ և նաև կամաց կամաց առ զգայութիւն հակելէ կը հեռացընէ, և կը պատրաստէ առ առաքինութիւն։ Անոր համար, ինչպէս փորձով տեսնուած է, աշխարհքի մէջ պատանեկութիւնը կրթելու համար՝ խելացի անձանց միակ ջանքըն եղած է՝ պղտիկուց ընտանի ընել անոր քաղցը ուսմունքը։ Այս նախնական կրթութենէն կը սկսին կամաց կամաց անցնիլ՝ կենաց ամենաբարձր և ամենակարևոր պարտուց կատարման։ Եւ իրաւցընէ մեծ յոյս կու տան այնպիսիներն՝ որոնց միտքն հակամէտ է ազնուախոհ և փափուկ յօժարութեան, զի ասոր վրայ շատ առաքինութիւններ կարող են պատուաստել։

Եւ յիշաւի, չկայ հոգւոյ և մտաց բերմանցը որ և իցէ պայման մը՝ որուն հետ ընտիր ճաշակաց յառաջագիմութիւնն՝ քիչ կամ շատ կապ չ'ունենայ։ Մշակեալ ճաշակ մը՝ կ'ածնցընէ զգացողութիւննիս՝ իր ամեն փափուկ և ազնուական կրիւքը, և բուռն ու կատաղիներն կը հերքէ։ Ովիդիոսի խօսքն է.

« Արուեստից ազատութեան մըշակութիւն հաւատարիմ »

Յաւէտ ըզբարս գիտէ մարդկան կակղել ըզրիւրտ և ըզվայրադ » :

Այն բարձր զգացմունքը, այն գերազանց և զարմանալի օրինակներն՝ զոր Բանաստեղծութիւն, Ճարտարխօսութիւն և Պատմութիւն ստէպ մեր աչքին առջև կը դնեն, կ'օգնեն նաև բնականապէս՝ սնուցանել մեր հոգւոյն մէջ՝ ոգի հասարակասիրութեան, հայրենասիրութեան, արհամարհութիւն բաղդին ցնորից և զարմանք առ ամենայն ինչ՝ որ իրաւցընէ մեծ է և գերահամբաւ։

Շարունակելի

Հ. Թ. Թ.